«Հայ պարբերական մամուլ» համահավաք էլեկտրոնային շտեմարանը

Հայկուշ Ղազարյան
Հայաստանի ազգային գրադարան

Հայկական գրատպության պատմության կարևոր մասն է պարբերական մամուլի տպագրությունը, որի պատմությունն սկսվում է 1794թ. Մադրասում Հարություն Շմավոնյանի «Ազդարար»-ի հրատարակությամբ: Հայկական պարբերականների թվաքանակը մատենագիտական տարբեր աղբյուրներում տարբեր տվյալներով տարբեր է:: Գ. Լևոնյան՝ 1607
Կիրակոսյան Ա.՝ 3264 պարբերական
Բաբլոյան՝ 3110 Զ. Միլդանօղլու՝ 3719
2013թ. Ազգային գրադարանի մամուլի հավաքածուում հաշվվում էր 3650 անուն: Այս պահին հաշվվում է 3759 անուն, որից 2108 անուն հանդես և 1651 անուն լրագիր: Այսինքն՝ Ազգային գրադարանը 2013թ. հունվարի 1-2016թ. հոկտեմբերի 1 ժամանակահատվածում ձեռք է բերել 109 նոր անուն պարբերական, որից 26 անուն լրագիր և 83 անուն հանդես: Ազգային գրադարանի մամուլի հավաքածուում կա երկու անուն 18-րդ դ., 332 անուն՝ 19-րդ դ. և մնացած անունները՝ 20-21դդ.: Դրանց մեջ են Ազդարար (Մադրաս,1794), Տարեգրություն (Վենետիկ, 1799), Արմենիա (Մարսել, 1885), Արշալույս Արարատյան (Զմյուռնիա, 1840), Բազմավեպ (Վենետիկ, 1843), Հանդես ամսօրյա (Վիեննա, 1887), Արծվիկ Տարոնո (Մուշ, 1863), Հյուսիսափայլ (Մոսկվա, 1858), Մշակ (Թիֆլիս, 1872) , Մուրճ (Թիֆլիս, 1889), Լումա (Թիֆլիս, 1896), և այլ արժեքավոր անուններ: Լույս ընծայվելով որոշակի պարբերականությամբ՝ հանդեսները և թերթերը, հատկապես օրաթերթերը, շաբաթաթերթերը, հայկական կենտրոններում ու գավառներում կատարվող իրողությունները արձանագրել են վավերական արժանահավատությամբ: Պարբերականները անսպառ նյութ են պարունակում հայ ժողովրդի պատմության, հասարակական- քաղաքական կյանքի, մշակույթի և այլ բնագավառների վերաբերյալ, և այդ առումով դրանք տարբեր հետաքրքրություններ ունեցող հետազոտողների համար համարվում են աղբյուրագիտական անփոխարինելի շտեմարաններ: Թերևս այդ է պատճառը, որ պահպանության առումով պարբերականները առավել խոցելի են, քան գրքերը: Ուստի այսօր հայկական մշակութային ժառանգության պահպանման, քարոզչության ու հանրահռչակման համար դրանց երկարաժամկետ պահպանության ապահովումը օրախնդիր հարց է:

Շտեմարանի ստեղծման նախապատրաստական ընթացքի, գրադարանային փաստաթղթերի երկարաժամկետ պահպանության խնդիրների, պարբերական մամուլի գրադարանային հավաքածուի ամբողջականության վերականգնման, աշխատանքների համակարգման, հայաստանյան գրադարանների, հայկական մշակութային-հոգևոր և կրթական հաստատությունների, ինչպես նաև արտերկրի գրադարանների հետ փոխհամագործակցության հարթակների ձևավորման, առաջնահերթությունների որոշման, ծրագրային լուծումների, մեքենայական հզորությունների, տեխնիկական վերազինման, գրադարանավարների մասնագիտական որակավորման և այլ գործընթացների մասին, որոնց առկայությամբ և իրականացմամբ միայն հնարավոր կլիներ ՀԱՅ ՄԱՄՈՒԼ առցանց

գրադարանի հաջող գործարկումը, արդեն մի քանի առիթներով խոսել ենք և հանգամանալից ներկայացրել:

Շտեմարանի ձևավորման մասնակից գրադարաններն են Մայր Աթոռ Ս. Էջմիածնի **«Վաչե** և Թամար Մանուկյան» Մատենադարանը, Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության Մատենադարանը, Վենետիկի, Վիեննայի Մխիթարյան միաբանության մատենադարանները, Հայաստանի ազգային, Խնկո-Ապոր անվան Ազգային մանկական, ԳԱԱ Հիմնարար գիտական, գիտատեխնիկական, Մատենադարանը, ԳԱԹ-ը, ԵՊՀ և մյուս բուհական գրադարանները, գիտաբժշկական, մարզային 10 գրադարանները, առանձին պարբերականների խմբագրությունները, ինչպես նաև առանձին անհատներ Հայաստանից և արտերկրից:

Շտեմարանում ներկայացված է հայատառ, այլալեզու, երկլեզվյան ու բազմալեզվյան մամուլի այն անվանումները, որոնց բնագրի լեզուներից մեկը հայերենն է, ինչպես նաև էլեկտրոնային պարբերականներ՝ ընդամենը՝ 5686 գրառում՝ սկսած 1794թ. Ազդարարից մինչև մեր օրերը:

«Հայ պարբերական մամուլ» համահավաք էլեկտրոնային շտեմարանը հասանելի է գրադարանի կայքէջից՝ http://nla.am կամ http://tert.nla.am/ հասցեից:

Այս աշխատանքի արդյունքը արդեն իսկ գրավիչ է ընթերցողի համար: Գրացուցակի «Կարդալ առցանց» հղման ներքո հասանելի են պարբերականի համարները և դրանց թվային պատճենները: Օգտվողը առանց գրադարան այցելելու և պատվիրաթերթիկ լրացնելու կարող է ընթերցել իր հետաքրքրությունների շրջանակում գտնվող պարբերականի անհրաժեշտ նյութերը, ներբեռնել անհատական համակարգիչ կամ տպել:

-

[1]: Ազգային գրադարանի կայքէջում (www.nla.am)
Թվայնացված մամուլի վիճակագրություն «*Թվայնացված պարբերականներ*[2]*»* հղման ներքո ներկայացված է «Հայ մամուլ» շտեմարանի ձևավորման դինամիկան աղյուսակով և 2 դիագրամայով, որոնցից մեկը ներկայացնում է ընթացիկ տարվա աշխատանքները՝ ամիսներով/տես նկ.1/, մյուսը՝ շտեմարանի ձևավորման ընթացքը ըստ տարիների /տես նկ.2/: Տվյալները թարմացվում են **շաբաթը** մեկ:

[1] Պետք է նկատի ունենալ որ 2010-2013 թթ. ընթացքում ՀԳԳ-ն թվայնացրել և համացանցում է տեղադրել մոտ 400 հազարից ավելի ամսագրային էջ:
[2] https://dl.dropboxusercontent.com/u/16623558/stat.pdf



Նկ.1

«ՀԱՅ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԻ» ԹՎԱՅՆԱՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

http://tert.nla.am



Նկ. 2

2011-13թթ. մեծ մասով ԳԱԱ ՀԳԳ-ն թվայնացրել է 454.347 էջ՝ հիմնականում ակադեմիական հանդեսներ: 2014թ. ընթացքում թվայնացվել է 295 անուն պարբերական (112 անուն լրագիր՝ 98.815 էջ և 183 անուն հանդես՝ 404.364 էջ): 2014թ. շտեմարանում տեղադրված թվային պատճենների էջերի ընդհանուր քանակը 503.179 է: 2015թ. ՀԱՅ ՄԱՄՈՒԼ շտեմարանում տեղադրվել է 168 անուն լրագրի թվայնացված էջեր /244.432 էջ / և 176 անուն ամսագրի թվայնացված էջեր /295.282 էջ/, ընդամենը՝ 344 անուն պարբերական և 539.714 էջ: Շտեմարանի ձևավորման 2011-2015թթ ընթացքում շտեմարանում առկա էր 662 անուն պարբերական՝ թվայնացված 1.486.456 էջ (292 անուն լրագիր՝257.958 էջ և 370 անուն հանդես՝ 1.228.498 էջ): 2016թ. հունվար-հոկտեմբեր ամիսներին ՀԱՅ ՄԱՄՈՒԼ շտեմարանում տեղադրվել է ևս 333 անուն պարբերականի թվայնացված էջ՝ 438.458 ընդհանուր էջերի քանակով: 2016թ. հոկտեմբերի 10-ի դրությամբ շտեմարանում առկա է 995 անուն պարբերականի թվայնացված (435 անուն լրագիր՝ 435.880 էջ և 560 անուն հանդես՝ 1.488.625էջ), էջերի ընդհանուր քանակը՝ 1.924.505: Դիտարկելով շտեմարանի ձևավորման դինամիկան, փաստում ենք, որ տարեկան 300-350 անուն պարբերականի

450-500000 թվայնացված էջ է տեղադրվում Հայկական պարբերականների առցանց գրադարանում և հասանելի ու կիրառելի դառնում հանրությանը երկրագնդի ցանկացած վայրում: Համապատասխանաբար՝ 2011-13թթ.՝ 24 անուն, 2014թ.՝ 295 անուն, 2015թ.՝ 344 անուն և 2016թ. հոկտեմբերի 10-ի դրությամբ՝ 333 անուն /Տես նկ. 3/,
Համապատասխանաբար՝ 2011-13թթ.՝ 454.347 էջ, 2014թ.՝ 503.179 էջ, 2015թ.՝ 539.714 էջ և 2016թ. հոկտեմբերի 10-ի դրությամբ՝ 438.458 էջ /Տես նկ. 4/:



Նկ. 3. 2011-2016թթ. Հայ մամուլ շտեմարանում տեղադրված պարբերականներ /անուններ/



Նկ. 4. 2011-2016թթ. Հայ մամուլ շտեմարանում տեղադրված պարբերականներ /էջեր/



Նկ.5

1 անուն 18-րդ դ.
1 անուն 18-19-րդ դ.
129 անուն 19-րդ դ.
113անուն 19-20-րդ դդ.
389 անուն 20-րդ դ.
245 անուն 20-21-րդ դդ.
114 անուն 21-րդ դ.
3 անուն 19-րդ դ. մինչև մեր օրերը /Բազմավէպ, Սիօն, Հանդէս ամսօրեայ, Հայրենիք/ տես նկ.5

Նշեմ, որ Հայ մամուլ առցանց գրադարանի թվայնացված նյութերի զանգվածը ձևավորվել է հետևյալ ուղիներով

ա/ Համացանցում առկա նյութերի փնտրում և բեռնաթափում : Երբեմն մեկ անուն մամուլի տարբեր տարիների համարները ժողովում ենք մի քանի կայքերից: Օր.՝ Կռունկ հայոց աշխարհին /Թիֆլիս, 1860-1863/ հանդեսի երեք տարիների բոլոր 36 համարները գտել և բեռնաթափել ենք երեք տարբեր հասցեներից՝

https://books.google.am

http://www.digitale-sammlungen.de/Բավարիայի պետգրադարան/

https://babel.hathitrust.org

բ/ Հղում համացանցում առկա առցանց գրադարաններին

գ/ Այլ հաստատություններից նյութերի թվային տարբերակների ձեռքբերում: Այս առումով համագործակցում ենք բամաթիվ գրադարանների և անհատների հետ:

դ/Ժամանակակից պարբերականների խմբագրություններից հերթական համարների թվային պատճենների ստացում /Ժամանակ, Ազգ, Գոլոս Արմենիի, Հայաստանի Հանրապետություն, Հայ զինվոր, Արցախի մամուլի անուններից՝ Մարտիկ, Ջրաբերդ, մարզային պարբերականներից Հայրենականչ, Գեղամա աշխարհ, Թումանյանական աշխարհ, Սյունյաց երկիր ևլն /

ե/ Գրադարանի հավաքածուի նպատակային թվայնացում /Նկ. 5ա/



Նկ. 5ա. **Թվային պատճենների զանգվածի ստեղծում**

Որպես լռակյաց արտածում մատենագիտական գրառումները արտածվում են դիտման «Նորմալ դիտում» ձևաչափով / նկ 6/: «Կարդալ առցանց»՝ կարմիր սլաք հղումից անցում է կատարվում աղյուսակին (տե՛ս նկ. 7,/, ընտրել տարեթիվը, համարը և կարդալ /նկ.8/: Նկ. 9ում ներկայացված է արտածման պատկերը երբ ակտիվացված է «MARC դիտում[3]» հղումը (տե՛ս կարմիր ներկված հատվածը): Նկ. 10-ում բերված է արտածման պատկերը, երբ ակտիվացված է «ISBD դիտում[4]» հղումը:

[3] MARC = Machine readable cataloging = Մեքենաընթեռնելի քարտագրում

[4] ISBD = International Standard Bibliographic Description = Մատենագիտական նկարագրության միջազգային ստանդարտ

«Հայ պարբերական մամուլ» շտեմարան
«Արմէնիա» լրագրի օրինակի վրա /Նորմալ դիտում/

Նորմալ դիտում MARC դիտում ISBD Դիտում

Արմէնիա : Ազգային, քաղաքական լրագիր :

կողմից Փորթուգալեան, Մկրտիչ[տնօրէն-խմբ.].

Տեսակ: Շարունակվող պաշար

Analytics: ցույց տուր վերլուծականները

Հրատարակիչ: Մարսել : տպ.Մ. Փորթուգալեանի, 1885-1921

Նկարագրություն: 4 էջ ; 45 x 31 սմ.

Այլ Վերնագիր... Արմենիա

Խորագիր(ներ): Արմենական կուսակցությունի [illegible] կուսակցական մամուլ -- Պարբերականներ -- XIXդ | Մարսել | Ֆր[illegible] | Թերթ

Առցանց պաշարներ: Կարդալ առցանց

Նկ.6.



Նկ. 7



ԱՐՄԷՆԻԱ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԵՒ ԱՅԼՆ

Ա. ՏԱՐԻ ԹԻՒ 58

1886 ՄԱՐՏ 6

(ԳԻՏՈՒԱՐ 22 Հ. 8.)

ՇԱԲԱԹ

Նկ. 8.

«Հայ պարբերական մամուլ» շտեմարան
«Արմէնիա» լրագիր «MARC դիտում»

000 –LEADER fixed length control field 02965nas a22002297i 4500

003 - CONTROL NUMBER IDENTIFIER

control field AM-YeNLA

005 - DATE AND TIME OF LATEST TRANSACTION

control field 20140319114707.0

008 - FIXED-LENGTH DATA ELEMENTS--GENERAL INFORMATION

fixed length control field 121212d18851921Fe ||||| |||| 00| 0 arm d

040 ## - CATALOGING SOURCE

Transcribing agency AM-YeNLA

041 0# - LANGUAGE CODE

Language code of text/sound track or separate title arm

245 00 - TITLE STATEMENT

Title Արմէնիա :

Remainder of title Ազգային, քաղաքական լրագիր :

Statement of responsibility, etc Խմբ.-տնօրեն՝ Մ.Փորթուգալեան.

246 3# - VARYING FORM OF TITLE

Title proper/short title Արմենիա /

260 ## - PUBLICATION, DISTRIBUTION, ETC. (IMPRINT)

Place of publication, distribution, etc Մարսել :

Name of publisher, distributor, etc տպ.Մ. Փորթուգալեանի ,

Date of publication, distribution, etc 1885.

300 ## - PHYSICAL DESCRIPTION

Extent 4 էջ ;

Dimensions 45 x 31 սմ.

362 ## - DATES OF PUBLICATION AND/OR SEQUENTIAL DESIGNATION

Dates of publication and/or sequential designation 1885-1921

500 ## - GENERAL NOTE

General note «Արմենիա» թերթը հիմնադրվել է 1885 թ.-ին Մարսելում: Գրական և քաղաքական լրագիր է: 1907-1908 թթ.-ին խախտվել է պարբերականությունը: «Արմենիան» նկարագրել է արևմտահայերի ծանր վիճակը և նրանց պատրաստել ազգային-ազատագրական պայքարի: Արևմտահայերի կյանքի բարելավման գործում հույսեր չկապելով եվրոպական տերությունների հետ՝ թերթը ցույց է տվել նրանց շահախնդիր նպատակները

Թուրքիայում և ընդգծել ազատությունը սեփական ուժերով ձեռք բերելու գաղափարը: Տպագրել է լուրեր արևմտահայ գավառների իրականության, Կ.Պոլսի ազգային վարչության գործունեության, հայ գաղթավայրերի մասին, անդրադարձել է արևելահայ իրականությանը և բողոքել ցարիզմի ազգային քաղաքականության դեմ: Քաղաքական-հասարակական բնույթի հոդվածների կողքին «Արմենիան» տպագրել է նաև բանասիրական և հայագիտական նյութեր, գեղարվեստական ստեղծագործություններ և այլն: 1890-ին «Արմենիա»-ին կից լույս է տեսել «Արմենիա»-ի հուշարար» հավելվածը:«Արմենիա» լրագրի տպագրությանը նախորդել է 1885թ. հունիսի 18-ին թվագրված՝ Մկրտիչ Փորթուգալյանի և Ֆելիքս Անֆանդյանի ստորագրությամբ ձեռագիր «Յայտարարութիւնը», որում խոսվում է պարբերականի բաժանորդագրության պայմանների, նպատակի և գաղափարական ուղղության մասին: Հայտարարության թվային պատճենը ևս կցվում է:

650 14 - SUBJECT ADDED ENTRY--TOPICAL TERM

Topical term or geographic name as entry element Քաղաքականություն
Form subdivision Պարբերականներ
Chronological subdivision XIX դ.

650 14 - SUBJECT ADDED ENTRY--TOPICAL TERM

Topical term or geographic name as entry element Հայագիտություն
Form subdivision Պարբերականներ

700 ## - ADDED ENTRY--PERSONAL NAME

Personal name Փորթուգալեան , Մ.
Relator term խմբ.

856 41 - ELECTRONIC LOCATION AND ACCESS

Uniform Resource Identifier http://tert.nla.am/mamul/Armenia/NLA.html

Նկ. 9

«Հայ պարբերական մամուլ» շտեմարան
«Արմէնիա» լրագիր «ISBD դիտում»


Normal view MARC view ISBD view

Արմէնիա : Ազգային, քաղաքական լրագիր : Արմենիա / Տնօրէն-խմբ.՝ Մկրտիչ Փորթուգալեան. - Մարսել : տպ.Մ. Փորթուգալեանի, 1885-1921. - 4 էջ ; 45 x 31 սմ. - 1885-1921.

«Արմենիա» թերթը հիմնադրվել է 1885 թ.-ին Մարսելում: Գրական և քաղաքական լրագիր է: 1907-1908 թթ.-ին խմբագրվել է պարբերականությունը: «Արմենիան» նկարագրել է արևմտահայերի ծանր վիճակը և նրանց պատրաստել ազգային-ազատագրական պայքարի: Արևմտահայերի կյանքի բարելավման գործում հույսեր չկապելով եվրոպական տերությունների հետ՝ թերթը ցույց է տվել նրանց շահախնդիր նպատակները Թուրքիայում և ընդգծել ազատությունը սեփական ուժերով ձեռք բերելու գաղափարը: Տպագրել է լուրեր արևմտահայ գավառների իրականության, Կ.Պոլսի ազգային վարչության գործունեության, հայ գաղթավայրերի մասին, անդրադարձել է արևելահայ իրականությանը և բողոքել ցարիզմի ազգային քաղաքականության դեմ: Քաղաքական-հասարակական բնույթի հոդվածների կողքին «Արմենիան» տպագրել է նաև բանասիրական և հայագիտական նյութեր, գեղարվեստական ստեղծագործություններ և այլն: 1890-ին «Արմենիա»-ին կից լույս է տեսել «Արմենիա»-ի հուշարար» հավելվածը:«Արմենիա» լրագրի տպագրությանը նախորդել է 1885թ. հունիսի 18-ին թվագրված՝ Մկրտիչ Փորթուգալյանի և Ֆելիքս Անֆանդյանի ստորագրությամբ ձեռագիր «Յայտարարութիւնը», որում խոսվում է պարբերականի բաժանորդագրության պայմանների, նպատակի և գաղափարական ուղղության մասին: Հայտարարության թվային պատճենը ևս կցվում է: 1915թ. 18-րդ համարի ամսաթիվը դեկտեմբերի 1-ի փոխարեն սխալմամբ գրվել է դեկտեմբերի 24:

Subjects--Corporate Names:
Արմենական կուսակցություն

Subjects--Topical Terms:
Կուսակցական մամուլ--XIXդ.--Պարբերականներ

Subjects--Geographic Terms:
Մարսել
Ֆրանսիա

Index Terms--Genre/Form:
Թերթ

Նկ. 10

Շտեմարանի ձևավորման ընթացքում պարբերականների տարեթվերի ու համարների ամբողջականության հնարավոր վերականգնման, պակասող համարների թվային պատճենների ձեռքբերման ուղղությամբ բավականին աշխատանք է կատարվում, ինչի աշխարհագրական ընդգրկումը երևում է աղյուսակներից: Օրինակ, նույն Արմենիա լրագրի օրինակով, բացում ենք 1885 թ.: NN 2-4-ը մեր խնդրանքով տրամադրել են Վիեննայի

Մխիթարյան միաբանության Մատենադարանից: Համարների տակ նշված է Մատենադարանի կոդը՝ ՎՄՄ: տես Նկ.



ԱՐՄԵՆԻԱ

1885

	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18	19	20	21	22	23	24	25	26	27	28	29	30	31
I																															
II																															
III																															
IV																															
V																															
VI																															
VII																															
VIII	1							2 ՎՄՄ				3 ՎՄՄ							4 ՎՄՄ							5					
IX		6					7		8			9				10			11				12			13				14	
X			15				16			17				18			19				20			21				22			23
XI				24			25				26			27				28			29				30			31			
XII		32			33				34			35				36			37				38			39				40	

Նկ. 11

Իսկ 1921թ. համարների կազմը տրամադրել է ԳԱԹ-ը: Դարձյալ համարների տակ դրված է կոդը՝ ԳԱԹ: տես նկ.12:



Նկ. 12

Կամ Արշալոյս Արարատեան /Զմյուռնիա, 1840-1887/ լրագրի հրատարակության առաջին տասնամյակը բացակայում է Ազգային գրադարանում և ԿԿՄ-ն տրամադրել է իր հավաքածուում եղած տարեթվերի համարները: Ինչպես տեսնում ենք, բավական համարներ բացակայում են: Բացակայող որոշ համարներ արդեն շուտով կտրամադրի Ցեղասպանության թանգարանի տնօրենը: տես նկ.13



Նկ.13.

Շտեմարանը վիճակագրական տվյալներ ստանալու հնարավորություն է տալիս: Այսպես. բացվող ընտրացանկից ընտրելով Խորագիր (Subject) դաշտը և փնտրման պատուհանում նշելով երկրի կամ քաղաքի անունը՝ կստանաք ճշգրիտ տվյալներ, թե քանի անուն պարբերական է տպագրվել այդ վայրում, և առցանց այդ պարբերականները ընթերցելու հնարավորություն կունենաք: Կարելի է նաև ստանալ տվյալներ թե քանի թերթ կամ ամսագիր է տպագրվել: Տեղափոխվելով «Խորացված փնտրում» (Advanced Search) աշխատակարգ՝ կարելի է որոնման այս բոլոր հնարքները համադրել մեկ փնտրման մեջ:

Օրինակ, Խորագիր ընտրում ենք Ամսագիր՝ կանաչ սլաք, աշխարհագրական անուն ընտրում ենք Հայաստան կարմիր սլաք, փնտրում և տեղեկանում, որ Հայաստանում տպագրվել է 1233 անուն ամսագիր և կարող ենք ծանոթանալ և ընթերցել դրանք տես նկ. նկ. 14:

Կամ խորագիր ընտրում ենք Թերթ ՝ կանաչ սլաք, աշխարհագրական անուն ընտրում ենք Հայաստան կարմիր սլաք, փնտրում և տեղեկանում, որ Հայաստանում տպագրվել է 1334անուն թերթ և կարող ենք ծանոթանալ կամ ընթերցել դրանք տես նկ. 15

Որպես խորագիր ընտրում ենք , օրինակ Կուսակցական մամուլ, Արմենական կուսակցություն, աշխարհագրական անուն ընտրում ենք Ֆրանսիա և տեղեկանում, որ Արմենիա լրագրի մասին և ընթերցել այն Նկ. 16:

Իսկ որպես խորագիր նշելով հայատառ թուրքերեն արտահայտությունը՝ կիմանաք, թե քանի հայատառ թուրքերեն պարբերական է տպագրվել/7/: Նմանատիպ որոնում կարելի է իրականացնել խմորատիպ հրատարակությունների համար/131/:



Նկ. 14

Նկ. 15



Նկ. 16

Վերադառնալով շտեմարանի ստեղծման աշխատանքներում մասնակցող մեր բարեկամ գործընկերների հետ արդյունավետ համագործակցությանը, պետք է ասել, որ կարելի է վկայակոչել բազմաթիվ տպավորիչ թվային տեղեկություններ ու տվյալներ ի հավաստումն այն իրողության, որ Հայ մամուլ շտեմարանը հասանելիության շահեկան մի վիճակում է, որը ձեռք է բերվել ջանքերով մեր համախոհների ու գործակիցների մեծ թիմի, մարդկանց, ովքեր կարևորում են համահայկական այս նախագիծը կյանքի կոչելը: Դրա արդյունքում է նաև, որ կարողանում ենք ձեռք բերել Հայաստանում բացակայող պարբերականների համարներ, հաճախ՝ ամբողջական լրակազմը, այլև բացահայտել նոր անուններ: ոչ միայն տեղեկատվություն ենք ստանում նոր անուն պարբերականների մասին, այլև

Ազգային գրադարանի կայքում տեղադրված Թվայնացված մամուլի վիճակագրությունից՝ կարմիր սլաք կարող ենք հետևել թվայնացման աշխատանքներին, թվայնացվոած անուններին, իսկ կապույտ սլաքը ցույց է տալիս այն հաստատությունները, որոնց հետ աշխատում ենք, և հույս ունենք, դեռ էլի աշխատելու ենք համագործակցաբար նկ. 17



Նկ.17